Գ.

Փորձենք լուծել հանգոյցը, սկսելով նախ տեղի անունների չփոթութիւնից։ Վանականի խօսքերը, թէ «Դարոն եկեղեցի է չինել (Գրիգոր Մագիստրոս) եւ ծախիւք պատկեր բերեր և անդ եդեալ», ինքն ըստ ինքեան չի պարզում տեղի խնդիրը, բայց այդ հասկանալի է դառնում մասամբ, Աշխարհացոյցի խօսքերով, թէ «իսկ ի կողմն Գառնոյ Տարաւնի՝ մեծ եկեղեցին, որ է Հայոց Թառ», եւ ապա աւելի Մանուէլ Բջնեցու տեղեկութեամբ, թէ Մագիստրոս նախ «չինէ տեղ ուխտի յիւրում կայանի ի Տարաւն երկրի», ապա ժամանակ անցնելուց յետոյ, այնտեղից փոխադրելով «յիւր հըմնարկելի ուխտն հրաշալի՝ որ Հայու Թառ»։ Այստեղ երեք հեղինակների կողմից տարբեր ձեւակերպութիւններով յայտնուած անունը նոյնն է, ճիշդը Վանականի խօսքերի մէջ պահուած՝ «Դարոն», որ չպէտք է շփոթել Կոգովտի Դարոյն, Դարոյնք անունով ամրոցի հետ, սեպհականութիւն Բագրատունիների, որտեղ եւ Աշոտ պատրիկը իւր եկեղեցին չինեց եւ զետեղեց «զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի»։ Վանականի յիշած «Դարոն»ը նոյն է Հասանգալէի հետ՝ Բասենում, ինչպէս գիտէ այդ Զաքարիա պատմիչ(1)։ Ալիշանի բերած մի հատուածից էս երևում է, որ հին բժշկարանները հրաշալի համաստիւռ ծաղկի տեղը համարում էին Միրանեաց լեառը, որ գտնւում է Հասանգալէի մօտ. «երթ, ասէ, ի Բասեն եւ խնդրեա զգեօղն որ կոչի Դարոյնս...»(2)։ ԺԱ. դարում այս վայրը Գրիգոր Մագիստրոսի սեպհականութիւնն էր. այստեղ էր նորա կինը, Գրիգոր Վկայասէրի մայրը, երբ որդին այցելութեան եկաւ նորան։ Սրբութիւնների և նրանց տեղերի անունների նոյնութիւնն ու նմանութիւնները, շփոթութիւնների ծագման գլխաւոր պատճառներից մէկը պիտի համարել, որի մէջ ընկած տեսանք Զամբռի հեղինակին, բայց նաև, երկու սրբութիւնների նոյնացնողներին, որ կ'տեսնենք յետոյ։

(1) Պատմ. Վաղարշ. 1870. Բ. 16. «զփաշայն Դարունոյ՝ որ է Հասան-գալայ»։

(2) Այրարատ. եր. 19։

Այժմ անցնինք պատմական անձնաւորութիւնների յիշատակութեան խնդրին։ Գրիգոր Մագիստրոս Բջնեցու ծննդեան տարեթիւը չգիտենք. գիտենք, որ նա մեռաւ մօտաւորապէս 1058 *թուին*(1). *գիտենք նաև, որ* 1021 *թուին*(2), *երբ Սելջուկները առաջին անգամ մտնում են Անիի թագաւորութեան սահմանները եւ ընդհարւում նորա հօր՝ Վասակ Պահլաւունու հետ, նա պէտք է երիտասարդական այնպիսի հասակում լինէր, որ հայրը տունն ու բերդը նորան յանձնել և ինքը պատերազմ գնալ կարողանար. բացի դորանից ինչպէս Կոստանեանն*(3) *է մատնանշում, Վասակ Պահլաւունին մօտաւորապէս* 50 *տարեկան պիտի լինէր այդ ժամանակ։ Այս հանգամանքները կշռելով՝ Գրիգոր Մագիստրոս պէտք է լինէր մօտաւորապէս* 30 *տարեկան, եթէ այդպէս է սորա որդին Գրիգոր Վկայասէրը, որ մեռաւ* 1105 *թուին, ոչ միայն Կ. Պոլիս ուղարկուելիք պատանի չէր լինիլ* 1021–1025 *թ. Վասիլ կայսեր վերջին տարիներում, այլ եւ գուցէ ծնուած չէր, կամ առ առաւելն նորածին մանուկ էր։ Տարաբաղդաբար մեզ անյայտ է այն աղբիւրը, որտեղից Մանուէլ Բջնեցին առել է Վասիլ արքայի և Գորգ իշխանի անունները. բայց իւրահնար չէ այդ. Մխիթար Այրիվանեցին Քեղուայ Գէորգ իշխանին է վերագրում Հաւուց Թառի առաջին շինութիւնը, Մանուէլ էս գովելով Քոչան լեառը, որի վերայ վանք է հաստատուած, աւելցնում է՝*

> *«Զի ի քեզ եդան յարկ եւ կայարան,*
> *ուխտ մաքրական*
> *Զմեծըդ մենաստան, զոր կանգնեաց արքայն եւ Գէորգ իշխան».*

իսկ աւելի ուշ՝ Սեբաստիայի Ս. Նշանի N 153 *ձեռագրի մի յետին յիշատակարանի համաձայն, «նորոգեաց սպարապետն Գորք իշխան»*(4)։ *Ահա ցուցումներ, որոնք հաս-*

(1) Լաստիվերտցի. Ղուկ. հրատ. 142։ Կոստանեան. Մագիստրոսի թղթերը. ԽԸ։

(2) Մատթ. Ուռհայեցի. Վաղարշ. 12։

(3) Մագիստրոսի թղթերը. ԻԹ։

(4) Ցուցակ Թորգոմ Արքեպիսկոպոսի։